ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Պետական եկամուտների կոմիտեի 2020 թվականի հունիս ամսվա գործունեության վերաբերյալ

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2020 թվականի հունվար-հունիս ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 25890.8 մլն դրամ՝ պլանավորված 25500 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 1.5 տոկոսով կամ 390.8 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 143 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 11 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել են 7 ստուգումներ, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 1.3 մլն դրամի չափով հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 262 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 83-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 153-ը՝ ԱՀ կառավարության 2020թ. մայիսի 18-ի N 372-Ա որոշմամբ հաստատված շահառուների ցանկում ընդգրկվելու չափանիշներին համապատասխանելու հիմքերի, 4-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 6-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 16 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան են ներկայացվել 1 բռնագանձման հայց՝ 6766.2 հազ. դրամ գումարով և վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ 2 հայցադիմում՝ 160.0 հազ. դրամ գումարով:

Դատական մարմինների կողմից նույն ժամանակահատվածում կայացվել է 23 վճիռ՝ 15283.4 հազ. դրամ ընդհանուր գումարով, որից 1-ը՝ 5248.1 հազ. դրամ գումարով, բռնագանձման հայցերի, 1-ը՝ 9645.3 հազ. դրամ գումարով, սնանկության հայցերի և 21-ը՝ 390.0 հազ. դրամ գումարով, վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ հայցերի հիման վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 265 վարչական գործով սահմանվել է 3235.0 հազ. դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 8110 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 7713:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 53 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում հունիս ամսում կատարվել է վերադարձ 14 վարձու աշխատողի՝ 1.4 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 41 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ԱՀ կառավարության հաստատմանն են ներկայացվել «Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» և ««Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 39-րդ կետով սահմանված արտոնության կիրառության շրջանակը սահմանելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերը:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում՝ երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի ու տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հաշվետու ամսում ամփոփվել են կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումների արդյունքները: Աջակցությունից օգտվելու նպատակով պետական եկամուտների կոմիտե դիմումներ են ներկայացրել 1645 տնտեսավարող սուբյեկտներ, որոնցից 1447-ը բավարարել են որոշման պահանջներին և սահմանված կարգով գանձապետարան են ներկայացվել 76718.2 հազար դրամ գումարի չափով վճարման հանձնարարականներ՝ վերջիններիս փոխանցելու նպատակով: Շահառուներից

1120-ը՝ 52223.9 հազար դրամ գումարի չափով, ընդգրկվել է միանվագ դրամական աջակցության ծրագրում, իսկ 327-ը՝ 24494.3 հազար դրամ գումարի չափով, միանվագ դրամաշնորհի ծրագրում: 198 տնտեսավարող սուբյեկտների դիմումները մերժվել են որոշման պահանջները չբավարարելու պատճառով:

2020 թվականի 2-րդ եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 1322 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները, այդ թվում՝ ներկայացվել պարզաբանումներ՝ 2020 թվականի հուլիսի 1-ից սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտի առավելագույն ամսական շեմի փոփոխության վերաբերյալ:

«Հարկերի մասին» օրենքի 30.1-ին հոդվածով սահմանված կարգով հրապարակվել են 2019 թվականի տարեկան արդյունքներով հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկերը:

Հաշվետու ամսում շարունակվել է կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչի մասնակից քաղաքացիների վճարած սոցիալական վճարների գումարների վերահաշվարկի գործընթացը, որի շրջանակներում 92 քաղաքացու վերադարձվել է սոցիալական վճարի ավել վճարված մասը:

Հունիս ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 1806, ելքագրվել՝ 265 նամակ-գրություն, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 1 գրություն: